ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Վարդանյան Թ. Գ., Գրիգորյան Ա.Թ.

Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստան, tvardanian@ysu.am

Երկրագնդի վրա առկա և սպասվելիք գլոբալ փոփոխություններն ու մարտահրավերները լրջորեն մտահոգում և անհանգստացնում են աշխարհի ողջ բնակչությանը՝ սպառնալով հասարակության և տնտեսության կայուն զարգացմանը:

Աշխարհագրության առաջընթացը, ուսումնասիրման բնական և հասարակական համակարգերը և օբյեկտների բազմազանությունը, գլոբալ, ռեգիոնալ և լոկալ հիմնախնդիրները, դրանց սրընթաց փոփոխությունները, զարգացման ժամանակակից միտումները նոր մոտեցումներ ու պահանջներ են առաջադրում աշխարհագրության բովանդակության, կրթության և ուսուցման որակի բարձրացման համար:

Աշխարհը մշտապես փոխվում է. փոփոխվում են նաև աշխարհագրությունը և աշխարհագրական կրթությունը: Աշխարհագրական կրթության առաջին միջազգային խարտիան/կանոնադրությունը մշակվել է Միջազգային աշխարհագրական միության աշխարհագրական կրթության հանձնաժողովի կողմից և որպես փաստաթուղթ ընդունվել է 1992 թ. Վաշինգտոնում կայացած Միջազգային աշխարհագրական միության Գլխավոր ասամբլեայի 27-րդ Միջազգային աշխարհագրական կոնգրեսում (www.igu-cge.org): Մշակված կանոնադրությունը բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ և շարունակում է ունենալ աշխարհագրական կրթության զարգացման գործում:

Այնուհանդերձ աշխարհում տեղի ունեցող գործընթացների սրընթաց զարգացումը և առկա մարտահրավերները նոր խնդիրներ դրեցին աշխարհագրական կրթության առջև: Այդ նկատառումներից ելնելով, Միջազգային աշխարհագրական միության աշխարհագրական կրթության հանձնաժողովը մշակեց նոր կանոնադրություն, որն առավել ամփոփ է, կառուցողական և ներառում է գործողությունների հստակ ծրագիր:

Նոր կանոնադրության վերջնական նախագիծը 2016 թ ներկայացվել է Պեկինում կայացած Միջազգային աշխարհագրական միության (IGU) կոնֆերանսին և հաստատվել է Գլխավոր ասամբլեայի կողմից (2016 թվականի օգոստոսի 24-ը) (http://www.igu-cge.org/2016-charter/):

Միջազգային աշխարհագրական միությունը բարձր է գնահատել Կանոնադրության մեջ ներկայացված սկզբունքներն ու գործելակերպը որպես Միջազգային գործողությունների ծրագիր՝ միաժամանակ նշելով, որ այս ծրագրի միջոցով աշխարհի բոլոր երկրները կարող են ստանալ աշխարհագրական կրթություն, որի իրավունքը նրանք ունեն:

Կանոնադրությունը հաստատագրված է բոլոր երկրների կառավարություններին և ժողովուրդներին, և առաջարկվում է հաշվի առնել դրանում հռչակված սկզբունքներն ու գործելակերպը, որոնց շնորհիվ պետք է պահպանել աշխարհագրական կրթության կարևորությունը բոլոր երկրներում:

Ընդունված նոր՝ 2016 թվականի, Կանոնադրությունը հաստատում է նախորդ փաստաթղթով հռչակված դրույթների շարունակականությունը և մի անգամ ևս փաստում է, որ.

- Աշխարհագրությունը գիտություն է Երկրի, նրա բնական միջավայրի և հասարակության մասին: Աշխարհագրությունը նաև ուսումնասիրում է մարդու գործունեությունը շրջակա միջավայրի հետ նրա փոխկապակցվածության և փոխազդեցության մեջ՝ ինչպես լոկալ-տեղական, այնպես էլ գլոբալ/համաշխարհային մակարդակով:
- Աշխարհագրությունը ծառայում է որպես կապող օղակ բնական, տեխնիկական և հասարակական գիտությունների միջև և հանդիսանում է գիտության ինքնուրույն բնագավառ, որը մեկնաբանում է տարածքային տարբերությունների և երևույթների տարածական բազմազանության պատճառները, իրադարձությունները և գործընթացները տարբեր տարածքներում, ուստի այն պետք է դիտվի որպես ցանկացած հասարակության բոլոր անդամների դաստիարակության անբաժանելի մաս:
- Աշխարհագրական կրթությունը անտեսվում է աշխարհի որոշ մասերում, իսկ մյուս մասերում այն վատ կառուցվածք ունի և չի ստանում համապատասխան աջակցություն (http://www.igu-cge.org/wp-content/uploads/2018/02/IGU_2016_def.pdf) :

Այժմ տեսնենք, թե ինչ է արվել անկախ Հայաստանում աշխարհագրական կրթության զարգացման ուղղությամբ: Միանգամից նշենք, որ աշխարհագրական կրթության ուղղությամբ մեր երկրում գրեթե ոչինչ չի արվել, եթե նկատի չունենանք ՀՀ կրթությանը վերաբերող մի քանի փաստաթղթեր, որոնք համընդհանուր են ողջ կրթական համակարգին: Դրանցից գլխավորներն են՝ Կրթության մասին ՀՀ օրենսդրությունը, ներառյալ գործող կրթակարգը (ՀՀ կառավարության 27.05.2004թ. N20 արձանագրային որոշում) և հանրակրթության պետական չափորոշիչը (ՀՀ կառավարության 08.04.2010թ. N439-Ն որոշում), հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքների գնահատման հետազոտության հաշվետվությունը, համապատասխան հայեցակարգային փաստաթղթեր՝ մշակված ԿԳՆ-ի կողմից և այլն :

Ըստ այդ փաստաթղթերի ՀՀ հանրակրթական դպրոցներում աշխարհագրության դասավանդումն ըստ դասարանների բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Աշխարհագրության դասավանդումն ըստ դասարանների

Դասարանները	Դասընթացի անվանումը	Ժամաքանակը	
		ընդհանուր հոսքերում	խորացված հոսքերում
Միջին դպրոց			
6-րդ	Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն	1	
7-րդ	Հասարակական աշխարհագրություն: Աշխարհ	1	
8-րդ	Հասարակական աշխարհագրություն: Տարածաշրջաններ և պետություններ	2	
9-րդ	Հայաստանի աշխարհագրություն	2	
Ավագ դպրոց			
10-րդ	Աշխարհագրություն	2	3
11-րդ	Աշխարհագրություն	1	5
12-րդ	Աշխարհագրություն	1	8

2016-2017 ուստարում հանրակրթական դպրոցներում աշխարհագրության դասավանդմանը 6-12-րդ դասարաններում հատկացվել է 340 ժամ (6-րդ, 7-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններում՝ շաբաթական 1-ական ժամ, 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններում՝ շաբաթական 2-ական ժամ):

Եթե հանրակրթական ավագ դպրոցի 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների հումանիտար հոսքի և բնագիտամաթեմատիկական հոսքի ուսումնական պլաններով խորացված ուսուցմամբ առարկաներից մեկն աշխարհագրությունն է (հոսքային բաղադրիչ 1), ապա այն ուսումնասիրվելու է 10-րդ դասարանում շաբաթական 3 ժամով, 11-րդ դասարանում՝ 5 ժամով, 12-րդում՝ 8 ժամով: Մյուս դեպքերում որպես ուսպլանի հարակից առարկա «Աշխարհագրությունը» պետք է դասավանդվի 10-րդ դասարանում 2 կամ 1 դասաժամով, 11-րդ և 12-րդ դասարաններում շաբաթական 1 դասաժամով՝ ընդհանուր հոսքի համար կազմված ծրագրով, իսկ որպես բնագիտամաթեմատիկական և հումանիտար հոսքերի առարկա կարող է դասավանդվել՝ 10-րդ և 11-րդ դասարաններում 1-ական դասաժամով՝ համապատասխան ծրագրով:

Աշխարհագրության դասավանդման ընդհանուր ժամաքանակը ՀՀ-ում գրեթե համապատասխանում, իսկ առանձին դեպքերում՝ նույնիսկ գերազանցում է բազմաթիվ երկրների կրթական ծրագրերով նախատեսված ժամաքանակին, մասնավորապես՝ Եվրոմիության, Արևելյան Եվրոպայի երկրների, Ռուսաստանի, Չինաստանի և այլն:

Սակայն, հարկ է նշել, որ միայն ժամաքանակով է գրեթե համապատասխանում, իսկ ծրագրերի և դասագրքերի բովանդակությամբ. ինչպես նաև կրթական մեթոդներով այն շատ հեռու է բավարար լինելուց:

Այնուհանդերձ պետք է նշել, որ աշխարհագրական կրթական համակարգը ներկայումս ամբողջ աշխարհում գտնվում է դեգրադացիայի վիճակում, որը դրսևորվում է, մասնավորապես, աշխարհագրության դասավանդման համար հատկացված ժամերի անընդհատ կրճատմամբ, ինչպես հիմնական դպրոցում, այնպես էլ՝ ավագ:

Կրթության և գիտության ոլորտում բարեփոխումների արդյունավետության բարձրացումը կարևորագույն գործիք է պետական, հանրային և անհատական ապահովության ու հասարակության կայուն զարգացման երաշխավորման համար:

Այսօր կրթական ծրագրերի մշակման հիմքում պետք է դրվի նոր մոտեցում՝«Կրթություն՝ կայուն զարգացման համար», որը վաղուց ներդրվել է առաջադեմ կրթական համակարգ ունեցող երկրներում:

Նախնական աշխարհագրական կրթությունը պետք է պատասխանատվություն կրի մեր երեխաների աշխարհագրական գրագիտության և հասարակության կայուն զարգացման համար:

Եզրափակելով վերը նշվածը կցանկանայինք մեր պատկերացմամբ ձևակերպել այն հիմնական նպատակները, խնդիրները, որոնք դրված են ժամանակակից աշխարհագրական կրթության առջև և դրանց իրականացմանը նպաստող առաջարկությունները:

- Հանրակրթական դպրոցում աշխարհագրական կրթությանը պետք է հաղորդել **կիրառական ու գործնական ուղղվածություն**, որը առկա ծրագրերում, առավել ևս՝ դասագրքերում, բացակայում է:
- Դպրոցական բազային աշխարհագրության կրթական համակարգում անհրաժեշտ է **իրականացնել կրթական ռեֆորմ**, այսինքն՝ վերամշակել առկա ուսումնական պլաններն ու ծրագրերը, որոնք կբավարարեն արդի պահանջներին: Համակարգն անհրաժեշտ է վերազինել և ապահովել նոր ուսումնաօժանդակ ռեսուրսներով:
- **Նաշագծերի իրականացում դպրոցներում** (անհրաժեշտ է դպրոցներում իրականացնել համատեղ փոքրիկ նախագծեր, որտեղ մանկավարժը, ասպիրանտը, աշակերտն ու պրոֆեսորը միասին կկատարեն որոշակի հետազոտական և կիրառական բնույթի աշխատանք՝ համապատասխան սարքավորումներով, որոնք նույնպես հետաքրքրություն կառաջացնեն աշակերտների շրջանում):
- Նպաստել **դպրոց-բուհ համագործակցության խորացմանը**՝ դպրոցականներին ներգրավել ուսանողական աշխատանքներին:
- Ակտիվացնել դպրոցականների մասնակցությունը **Միջազգային աշխարհագրական օլիմպիադաներին**:
- Երևանի պետական համալսարանի Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետին կից ստեղծել **Պատանի աշխարհագետի դպրոց:**

Վերջապես, համագործակցելով Կրթության և գիտության նախարարության, Կրթության ազգային ինստիտուտի և այլ շահագրգիռ կողմերի հետ, անհրաժեշտ է մշակել ***դպրոցական աշխարհագրական կրթության զարգացման նոր հայեցակարգ***, որը պետք է բխի հասարակական պահանջից, ընդգրկելով կրթության բոլոր մակարդակները՝ **նախադպրոցականից մինչև բարձրագույնը**:

Հայեցակարգի հիմնական նպատակը պետք է լինի աշխարհագրական կրթության համակարգում առկա բացթողումների վերացումը՝ ապահովելով դրա համապատասխանությունը պետության և հասարակության արդի պահանջներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կրթության մասին ՀՀ օրենքը, ընդունված Ազգային ժողովի կողմից 14 ապրիլի 1999 թ. 23 էջ
2. ՀՀ օրենքը հանրակրթության մասին, ընդունված է 2009 թվականի հուլիսի 10-ին
3. Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդունված է ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439 -Ն որոշմամբ, 56 էջ
4. International Charter on Geographical Education, proclaimed by International Geographical Union Commission on Geographical Education, Washington 1992, 22 p.
5. International Charter on Geographical Education, proclaimed by International Geographical Union Commission on Geographical Education, Beijing 2016, 20 p.

MODERN ISSUES OF GEOGRAPHICAL EDUCATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Vardanyan T. G., Grigoryan A.T.

Yerevan State University, Yerevan, Armenia, tvardanian@ysu.am

Abstract

The article briefly presents two Charters of international geographical education which have been adopted by the International Geographical Union (IGU). The existing educational problems in the world and in the Republic of Armenia have been analyzed and some suggestions have been given for their solution.